



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*19 հունվարի 2011 թվականի
թիվ 21-Ա, քաղաք Երևան*

**«ԱՄՐԱՆ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, «ՄԻԿՄԵՏԱԼ», «ՄԵՏԵՔՍ» ՓԲ
ԵՎ «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի հունվարի 19-ի դռնբաց նիստում՝ «Մետեքս» փակ բաժնետիրական և «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկեց «Ամրան» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև «Միկմետալ», «Մետեքս» փակ բաժնետիրական և «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող համարելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովի 2005 թվականի մարտի 11-ի ««Հարթ գլանվածք», «Ամրալար», «Ամրան», «Անկյունակ, ձևավոր և հատուկ պրոֆիլներ» ապրանքային շուկաների ուսումնասիրությունների արդյունքների մասին» թիվ 10-Ա որոշմամբ (այսուհետ՝ Հանձնաժողովի թիվ 10-Ա որոշում) «Ամրան» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է ճանաչվել «ամրան» ապրանքատեսակը, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը ինչպես նաև Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 4-ի ««Ամրան» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների, «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությանը գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցումից հանելու, ինչպես նաև «Միկմետալ» և «Յունիմետխիմ» ընկերություններին այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող համարելու մասին» թիվ 41-Ա որոշմամբ «Միկմետալ» փակ բաժնետիրական և «Յունիմետխիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն «Ամրան» ապրանքային շուկայում համարվել են գերիշխող դիրք ունեցող (երկուսով իրացման ծավալներով գրավել են շուկայի մեկ երկրորդից ավելին՝ 50,47 տոկոսը) և գրանցվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

«Ամրան» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա: Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել տնտեսվարող սուբյեկտների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Համաձայն Կոմիտեի տվյալների նշված ժամանակահատվածում շուկայի մասնակից 15 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկրվել է 39 461,66 տոննա ամրան՝ 9 341 613,88 հազար դրամ մաքսային արժեքով:

«Ամրան» ապրանքային շուկայում ուսումնասիրություն իրականացնելու նպատակով Հանձնաժողովը 2010 թվականի օգոստոսի 23-ին «Ամրանի և ամրալարի ներկրման, արտադրման և իրացման ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվություն ներկայացնելու մասին» թիվ 191-Ա որոշմամբ, տեղեկատվություն է պահանջել շուկայում գործող թվով 4 տնտեսվարող սուբյեկտներից: Համաձայն տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության, 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը թվով 4 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 36 322,5 տոննա ՝ 8 285 266,2 հազար դրամ արժեքով և իրացվել ՝ 31 055,11 տոննա ամրան՝ 10 824 724,25 հազար դրամ արժեքով:

Շուկայի մասնակից մյուս թվով 11 տնտեսվարող սուբյեկտների մասով Կոմիտեի կողմից տրամադրված ներկրման ծավալները՝ 2 794,15 տոննա ամրան՝ 9 341 613, 9 հազար դրամ մաքսային արժեքով ընդունվել են որպես իրացում:

Այսպիսով «Ամրան» ապրանքային շուկայի իրացման ծավալը 2010 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը կազմել է 33 849,25 տոննա:

«Ամրան» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցել են «Միկմետալ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 41,7 տոկոս, «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 37,3 տոկոս և «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 6,9 տոկոս, այսինքն, այսինքն, որպես իրացնող իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը: Հետևաբար, «Միկմետալ», «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությունները և «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը շուկայում ունեն գերիշող դիրք:

Ելնելով վերոնշյալից, հաշվի առնելով «Ամրան» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքները և հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը Հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 4-ի ««Ամրան» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների, «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությանը գերիշխող դիրք

ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցումից հանելու, ինչպես նաև «Միկմետալ» և «Յունիմետխիմ» ընկերություններին այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող համարելու մասին» թիվ 41-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերը և «Միկմետալ» փակ բաժնետիրական և «Յունիմետխիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին «Ամրան» ապրանքային շուկայում հանել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցումից:

2. «Ամրան» ապրանքային շուկայում «Միկմետալ» փակ բաժնետիրական ընկերությանը համարել գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ և «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությունների հետ միասին գրավում է շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 85,9 տոկոս) և գրանցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

3. «Ամրան» ապրանքային շուկայում «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համարել գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով «Միկմետալ» և «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությունների հետ միասին գրավում է շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 85,9 տոկոս) և գրանցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

4. «Ամրան» ապրանքային շուկայում «Մետեքս» փակ բաժնետիրական ընկերությանը համարել գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով «Միկմետալ» փակ բաժնետիրական և «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ միասին գրավում է շուկայի ավելի քան երկու երրորդը՝ 85,9 տոկոս) և գրանցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն համապատասխանաբար «Միկմետալ», «Մետեքս» փակ բաժնետիրական և «Եվրոպա», «Յունիմետխիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ